



ՄԲ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

St. Gregory of Narek Armenian Apostolic Church



Մարտ 5, 1998

Գերաշնորհ՝

Տէր Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան
Առաջնորդ Ամերիկահայոց Արեւելեան Թեմի
630 Երկրորդ Պողոտայ
New York, NY 10016-4885

Յարգելի Սրբազան Հայր,

Այս գրութեամբ Ձեզի կը հաղորդեմ որ Եկեղեցոյս 1997 Տարեկան Ծխական Ժողովը զումարուեցաւ Կիրակի, Փետրուար 15, 1998 Ս. Պատարագէն վերջ, ժամը 1:00ին: Ներկայ էին իրենց լման տուրքերը վճարած իննսուն վեց անդամներէն քառասուն եւ վեց զոյացնելով մեծամասնութիւն: **Օրուան դիւանը** կը բաղկանար Բասարլ Արսլանեանէ որպէս Ատենապետ եւ Ալիս Հաշըրեանէ որպէս Ատենադպիր:

Գաղտնի քուէարկութեամբ եկեղեցոյ **Ծխական Խորհուրդի** անդամ ընտրուեցան հետեւեալ անձինք՝ Բարգէն Մազսուտեան 34 քուէով, Տիգրան Արսլանեան 30 քուէով, Տէպրը Վենտերի 29 քուէով, Վլատիմիր Արութիւնով 24 քուէով, իսկ որպէս փոխանորդ Տինա Արսլանեան 14 քուէով եւ Լուիզ Տեմիրճեան 12 քուէով:

Ժողովէն մի քանի օրեր ետք սակայն, վերընտրեալ Վլատիմիր Արութիւնով ընդունելի պատճառներով յանձնեց իր հրաժարականը:

Ընտրողական Յանձնախումբի անդամ ընտրուեցան՝ Ճիլ Մազսուտեան 33 քուէով, Սթիվ Դաւիթեան 26 քուէով եւ Նինա Սեղրաքեան 26 քուէով, իսկ որպէս փոխանորդ Սերոբ Տեմիրճեան 20 քուէով:

Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամ ընտրուեցան՝ Սեպուհ Սեղրաքեան 35 քուէով (երեք տարուայ համար) եւ Մոնա Բարողլանեան 6 քուէով (երկու տարուայ համար):

Ուստի կը խնդրեմ Ձերդ Սրբազնութենէն որ բարեհաճիք վաւերացնել վերոյիշեալ ընտրութիւնները որպէսզի առիթը ունենանք ծխական խորհուրդի նոր դիւանը ընտրելու հնարաւոր փութով: Ընդունեցէք մեր կանխապայտ շնորհակալութիւններն ու բարեմաղթանքները:

Յարգանքով՝

L. Vukobratovic

Հայր Սիմէոն Արդ. Օտապաշեան
Հոգևոր Հովիւ

678 Richmond Road † Richmond Heights, Ohio 44143-2901 † Phone/Fax 216/381-6590